# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Ասքմեդ» ՍՊԸ-ի միջև 2025թ. նոյեմբերի 24-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 ծածկագրով հեղինակային հսկողության իրականացման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** **« 13 » դեկտեմբեր 2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ասքմեդ» ՍՊԸ**-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն **Հ. Կարապետյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **2025թ. նոյեմբերի 24-ին կնքված N ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10 ծածկագրով «ՀՀ Վայոց Ձորի մարզի ք.Վայքի վարժարանի (Վայքի N2 ավագ դպրոց) վերանորոգում», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 22 միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցի վերանորոգում» ծրագրերի ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների** պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի դրույթը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելված թիվ 2-ը՝ **ՀՀ «Վայոց Ձորի մարզի ք.Վայքի վարժարանի (Վայքի N2 ավագ դպրոց) վերանորոգում» ծրագրի ընթացքում հեղինակային հսկողության իրականացման ծառայությունների մատուցման** մասով շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի 1-ի:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:
5. Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** | «ԱԱՔՄԵԴ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան Սայաթ-Նովա25 բն.2 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 01513699 |
| Հ/Հ՝ 900011060820 | Հ/Հ՝ 2050022105861001 «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ |
| Կենտրոնական գանձապետարան | |
| Գործադիր տնօրեն Ս. Բաղինյան | Տնօրեն՝ Հայկ Կարապետյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
**2025թ. նոյեմբերի 24-ին կնքված**
**«ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10»** ծածկագրով
ծառայությունների գնման պայմանագրի

«13» հունվարի 2026թ.
կնքված Համաձայնագիր 1-ի

Հավելված N 2
**2025թ. նոյեմբերի 24-ին** կնքված
**«ՀՏԶՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2025/10»** ծածկագրով
ծառայությունների գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԳՄԱ ծածկագիրը՝ (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111140/90 | Հեղինակային հսկողություն | - | - | 1,287,858 | 1,287,858 | 1,287,858 | 1,287,858 | 2,642,947 | 2,642,947 | 2,642,947 | 2,642,947 | 2,642,947 | 2,642,947 | 2,642,947 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900011060820
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

____________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Ասքմեդ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 25

ՀՎՀՀ՝ 01513699
Հ/Հ 2050022105861001
Ինեկոբանկ ՓԲԸ
Տնօրեն
Հ. Կարապետյան

____________________
/ստորագրություն/
Կ.Տ